ՀՀ Տավուշի մարզպետարանը հայտարարում է զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի փորձագետ ներգրավելու համար 26.09.2019թ.

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանը հայտարարում է մրցույթ զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի փորձագետ ներգրավելու համար

Փորձագետը ներգրավվում է Մարզպետարանում զարգացման ծրագրերի ոլորտի գործառույթներն իրականացնելու նպատակով:

- Մարզի տնտեսական զարգացման ուղղվածություն, բիզնես ծրագրերի ուսումնասիրություն, աջակցություն, առաջխաղացում:
- Մարզի բիզնես զարգացմանը խոչընդոտող խնդիրների վերհանում լուծումների առաջարկում ձեռներեցներին աջակցության ծրագրերի մասով խորհրդատվության խորհրդատվություն մարզային զարգացման ծրագրերի ներկայացում Համայնքներում պետական ծրագրերի ներկայցում, համայնքներում մարզպետարանի ոլորտային ստորաբաժանումների աջակցություն համայնքների տնտեսական հնարավորությունների ուսումնասիրություն համայնքների զարգացման ծրագրերի մշակման աջակցություն:
- Կազմակերպել մարզի զարգացման ծրագրերի մշակման, քննարկման և հաստատման աշխատանքների կատարումը:
- Ապահովել մարզի զարգացման ծրագրերի ներդաշնակեցումը Հայաստանի Հանրապետության կառավարության երկարաժամկետ և միջնաժամկետ ռազմավարական ծրագրերին՝ հաշվի առնելով մարզի սոցիալ-տնտեսական վիճակի առանձնահատկությունները:
- Կազմակերպել և ղեկավարել մարզային նշանակության նպատակային ծրագրեր իրականացնող միջազգային և այլ դոնոր կազմակերպությունների ու ծրագրերի հետ համագործակցության աշխատանքները:
- Կազմակերպել յուրաքանչյուր տարվա համար նախորդ տարվա ծրագրերի կատարողականի վերլուծության ամփոփման աշխատանքները և կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ Աշխատակազմի ղեկավարի միջոցով Մարզպետի հաստատմանն է ներկայացնել ըստ ոլորտների զարգացման տարեկան ծրագիրը:
- Մարզպետին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել մարզի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ:

- Ապահովել ոլորտին վերապահված Մարզպետարանի ինտերնետային էջի թարմացման աշխատանքները՝ իրազեկելով ազգաբնակչությանը մարզի զարգացման ծրագրերի վերաբերյալ:
- Կազմակերպել մասնավոր հատվածի, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված համագործակցության աշխատանքները:
- Կազմակերպել և ղեկավարել զարգացման ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքները:
- Կազմակերպել գյուղատնտեսության, բնապահպանության, արդյունաբերության ոլորտների զարգացման գերակայությունների, զարգացման միտումների վերլուծությանն ու այդ ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման աշխատանքները և նպաստում դրանց իրականացմանը:
- Ապահովել մարզում զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքները:
- Ապահովել այլ երկրների համապատասխան մարմինների և միջազգային զբոսաշրջային կազմակերպությունների հետ հարաբերություններում Հայաստանի Հանրապետությունը և մարզը ներկայացնելու, բանակցային գործընթացի իրականացման, զբոսաշրջային բնագավառում մարզին վերաբերող համագործակցության փաստաթղթերի, ծրագրերի մշակման աշխատանքները
- Զբոսաշրջության ոլորտի փորձագեն ունի Օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

1. ՀՀ քաղաքացի
2. Բարձրագույն կրթություն
3. Ունի բանկային կամ վարկային կազմակերպությունների ոլորտում հինգ տարվա աշխատանքային ստաժ
4. Օտար լեզուների իմացությունը կդիտվի որպես առավելություն

Փորձագետ ներգրավելու ժամկետն է 3 /երեք/ ամիս:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

◆ դիմում ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի անունով
◆ տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայական(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,
◆ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
◆ մեկ գունավոր լուսանկար 3X4 սմ չափսի,
◆ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
◆ Հայտարարություն նշված սահմանափակումների բացակայության մասին՝
◆ պաշտոնից ազատվել կամ ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու,
◆ օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու,
◆ օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու,
◆ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու,
◆ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ, կամ էլեկտրոնային փոստի միջոցով:
Աշխատավայրը՝ ք. Իջևան, Սահմանադրության 1
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 09:00 – 13:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2019 թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ Տավուշի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (ք. Իջևան, Սահմանադրության 1 3-րդ հարկ, հեռ.՝ 0/263/4-22-20, էլեկտրոնային փոստի հասցեն՝ tavush.andznakazm@mta.gov.am):

ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր
քարտուղար Արման Գևորգյանին

.....

.....- ից
դիմողի անուն հայրանուն ազգանունը

.....

.....
դիմողի գրանցման հասցեն

……
……
դիմողի հեռ. (աշխատանքային, բնակ., բջջ.)

……
……
անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել

Ծննդյան՝……
……
օրը, ամիսը, տարին, վայրը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ ինձ ընդունել աշխատանքի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնում որպես փորձագետ:

Դիմող՝ ……

(ստորագրություն) (անուն ազգանուն)

<< ……>>

…… 2019թ.